ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏՆԵՐԸ (V–XII ԴԴ.)

Հոդվածում ներկայացված են Սյունիքի նշանավոր ուսումնագիտական կենտրոնները (Շաղատ, Մաքենյաց կամ Մաքենոցաց վանք, Տաթև և այլն) և ուսուցչապետները (Ստեփանոս Սյունեցի Առաջին,Պետրոս Սյունեցի, Մաթուսաղա, Մովսես Քերթող, Ստեփանոս Սյունեցի (Ստեփանոս Քերթող, Երկրորդ), Սողոմոն Մաքենացի): Լուսաբանված են ուսումնագիտական կենտրոնների և ուսուցչապետների գործունեության հետ կապված տարաբնույթ հարցեր: Արժևորվել են ուսումնագիտական կենտրոնների խաղացած դերը և ուսուցչապետների գրական ու գիտամանկավարժական ժառանգության տեղն ու նշանակությունը հայ միջնադարյան մշակույթում:

Բանալի բառեր՝ *Սյունիք, V–XII դդ., ուսումնագիտական կենտրոն, վարդապետարան, Շաղատ, Մաքենյաց կամ Մաքենոցաց վանք, Տաթև, ուսուցչապետ, Ստեփանոս Սյունեցի Առաջին,Պետրոս Սյունեցի, Մաթուսաղա, Մովսես Քերթող, Ստեփանոս Սյունեցի (Ստեփանոս Քերթող, Երկրորդ),Սողոմոն Մաքենացի:*

Իր ամրակուռ բերդերի, անառիկ ամրոցների, մեծաքանակ զինված ուժերի և ռազմապաշտպանական հզորության շնորհիվ Սյունիք աշխարհն առանձնահատուկ հռչակ է վայելել ու հսկայական նշանակություն ունեցել Մեծ Հայքի տարածքային ամբողջականության պահպանման և պետական սահմանների անսասանության ապահովման գործում: Լեռնաստանը միաժամանակ ծանրակշիռ ավանդ է ունեցել Հայաստանի հոգևոր-մշակութային կյանքում՝ նպաստելով հայալեզու դպրության, գիտության, մատենագրության, թարգմանական գրականության զարգացմանը և ազգային ինքնության ու ավանդույթների պահպանմանը:

Ըստ պատմիչ Կորյունի հաղորդած տեղեկությունների՝ սուրբ Մեսրոպ Մաշտոցը գրերի գյուտից հետո մեծ եռանդով ու ոգևորությամբ ձեռնամուխ է լինում Հայաստանում հայագիր դպրոցական ցանցի հիմնադրմանը և կրթական գործի ծավալմանը: Սյունիքում Մաշտոցի կրթալուսավորական ձեռնարկումներին նյութապես և բարոյապես աջակցում է Սյունյաց տանուտեր և նահապետ Վաղինակ իշխանը: Մաշտոցը, առաջին հերթին, աշակերտներ է ընտրում Սյունիքի առավել խուլ և վայրենաբարո բնակավայրերից՝ «Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեան... Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն, առաւել զգազանամիտ զվայրենագոյն զճիւաղաբարոյ կողմանցն. եւ այնչափ փոյթ ի վերայ ունելով՝ եւ դայեկաբար սնուցանել եւ խրատել... »[1], քանի որ տեղացի ուսուցիչները շատ ավելի լավ գիտեին տեղական բարքերն ու ավանդույթները և հետագայում ավելի պատրաստակամ, ջերմեռանդ, սիրով ու նվիրումով կաշխատեին ուսումնատենչ երեխաների հետ: Այս երեխաներից որոշ ժամանակ անց կրթված ուսումնականներ, եպիսկոպոսներ ու թարգմա-

1 **Կորյուն**, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 58:

նիչներ պատրաստեց[1]: Մաշտոցի շնորհալի սիւնեցի աշակերտների թվում էր Անանիան՝ «այր սուրբ եւ երեւելի հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ»[2], որին Մաշտոցը Սյունյաց եկեղեցու եպիսկոպոս է կարգում:

Մեսրոպ Մաշտոցի՝ Սյունիքում գործած նշանավոր աշակերտներից հիշատակվում է նաև Բենիամինը[3], թեև աղբյուրներում նրան տրվում է «աղուան ազգաւ» բնորոշումը, իսկ որոշ ուսումնասիրողներ էլ նրան համարում են հայ, բայց Աղվանից աշխարհից: Մաշտոցը Սյունյաց առաջին քարոզչական առաքելության ավարտին իր ընտրյալ աշակերտներ Անանիային և Բենիամինին թողնում է Սյունիքում ու նշանակում թարգմանիչ և ուսուցիչ. «Իսկ սուրբ այրն Աստուծոյ, թողեալ անդ յաշխարհին Սիւնեաց թարգման եւ ուսուցիչ յընտրեալ աշակերտաց իւրոց զԲենիամին եւ զԱնանիա, որ ձեռնադրեցաւ յետոյ յեպիսկոպոսութիւն աշխարհին զի մի վերստին (անկցի ի մոլորութիւն) եւ ինքն գնայ առ սուրբն Սահակ»[4]:

Կորյունի վկայությամբ՝ Մեսրոպ Մաշտոցին Հայաստանի արևելյան նահանգներում, մասնավորապես՝ Սյունիքում, դպրոցներ հիմնելու, լուսավորություն տարածելու և հայեցի դպրության ամրապնդման գործում աջակցել է Վասակ Սյունին, որն իր հորեղբայր Վաղինակից խլել էր Սյունյաց տանուտերությունը:

Սահակ Պարթև հայրապետն ու Մեսրոպ Մաշտոցը բարձր էին գնահատում Սյունյաց վարդապետարանի ներկայացուցիչների ունակությունները հատկապես հունարենից թարգմանություններ կատարելու և դրանց վերաբերյալ ուսումնասիրություններ, մեկնություններ գրելու դժվարին, տքնաջան ու պատասխանատու գործը վերապահում էին հենց Սյունյաց վարդապետարանի խորագիտակ ու քաջահմուտ վարդապետներին: Այս մասին, իհրավի, պարծանքով է վկայում պատմիչ Ստեփանոս Օրբելյանը. «...եւ առանց սոցա ոչ ձեռնադրի պատրիարք հայոց եւ ոչ լինի ժողով, այլ գլուխ եւ հրամանատար ժողովոյսոռքալինին, եւ նախ աթոռ վարդապետութիւն եւ հրաման մեկնութեան եւ թարգմանութեան սոցա միայն շնորհեցաւ ի մեջ հայոց ի սրբոյ Սահակայ եւ յերանեալ վարդապետէն Մեսրոբայ»[5]: Սա, իրոք, պերճախոս վկայություն է, որ Սյունյաց վարդապետարանը Հայաստանի հնագույն ուսումնագիտական կենտրոններից էր և բացառիկ հեղինակություն է ունեցել կրթամշակութային բնագավառի նշանավոր ներկայացուցիչների շրջանում:

Սյունյաց աշխարհի վարչական ու հոգևոր կենտրոնը Ծղուկ գավառի Շաղատ գյուղաքաղաքն էր, ուստի ուսումնագիտական կենտրոնը ևս ստեղծվում է այստեղ: Շաղատում գործող Սյունյաց վարդապետարանը հարատևում է մինչև IX դար: Սյունիքի մյուս դպրոցների համար վարդապետներ ու րաբու-

---

1 Տե՛ս **Խաչերեան Լ.Գ.**, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները. դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները եւ համալսարանները միջնադարեան Հայաստանում եւ Կիլիկիայում (V–XVI դդ.), հտ. Ա., Լիզպոն, 1998, էջ 282:

2 **Կորյուն**, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 58:

3 Աղվանից գիրը ստեղծելիս Մաշտոցին աջակից է եղել հենց Բենիամին երեցը: Հավանական ենք համարում, որ Բենիամինը ոչ միայն հայ էր, այլև ծնունդով սյունեցի, քանզի դժվար թե այլ ազգի մեկը Սյունիքում այդքան հարազատորեն ծավալեր հայ երեխաների հայեցի կրթության ազգանվեր գործը:

4 **Օրբէլեան Ստ.**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ, 54:

5 Նույն տեղում, էջ 26-27:

նիներ պատրաստում էր հենց Շաղատի վարդապետարանը. այն Սյունիքի հոգևոր-կրթական գործի նվիրյալների քուրան ու դարբնոցն էր:Շաղատի վարդապետարանի հիմնադիր է համարվում Անանիա Սյունեցի եպիսկոպոսը, որը Մաշտոցի աշակերտն էր և եպիսկոպոս է ձեռնադրվել սուրբ Սահակ Պարթևի կաթողիկոսի ձեռքով[1]: Գ. Գալեմքերյանը նկատում է. «Սիւնեաց վարդապետանոցը՝ երանաշնորհ թարգմանչաց ժամանակի գեղեցիկ ծնունդներէն մէկն է, Ս. Մեսրոպի աշակերտութենէն Անանիա, որ Սիւնեաց եպիսկոպոս ձեռնադրուած էր Ս.Սահակ հայրապետէն, առաջին անգամ հաստատեց իր երկրին մէջ դպրոց մը, եւ իր աշակերտներէն Բենիամինի յանձնեց անոր տեսչութիւնը»[2]:

Ստեփանոս Օրբելյանի գնահատմամբ՝ «...վարդապետարանն Սիւնեաց, որ գլուխ էր ամենայն գիտնոց Հայոց, եւ պայծառացեալ դպրոցի նոր ի նմա. Քանզի որպէս Աթենացի քնի մէջ Հռոմոց եւ Յունաց ճոխացեալ էին, եւ մայր իմաստից կոչեցեալ ի սպանիացւոց աշխարհին լատին եւ հելլէն դպրութեամբ, այսպէս եւ սոքա ի տանս Թորգոմայ աշխարհիս Հայոց»[3]: Պատմիչն, այնուամենայնիվ, որոշ չափազանցությամբ թերևս, Սյունյաց վարդապետարանը բարձրացրել ու հավասարեցրել է Աթենքի նշանավոր ճեմարանին: Հայ նշանավոր գիտնական, «Ճշգրիտ գիտությունների հայր» տիտղոսով մեծարված Անանիա Շիրակացին ևս բարձր է գնահատել Սյունյաց (Շաղատի) վարդապետարանը՝ այն համարելով «գլուխ ու հրամանատար» VII դ. Հայաստանի ուսումնագիտական կենտրոնների[4]: Իսկ հայ մանկավարժության պատմության մեծ երախտավոր Աբգար Մովսիսյանն էլ իրավամբ գրում է, որ «7-րդ դարը հայ դպրոցի և մանկավարժության պատմության մեջ մի առանձին փայլ չէր ունենա, եթե չլինեին Սյունյաց դպրոցները, որոնց գլուխ էր կանգնած հոգևոր բարձր տիպի դպրոց-վարդապետարանը»[5]:

Հայ միջնադարյան հոգևոր երաժշտության և հայագիր դպրության պատմության մեջ երևելի վաստակ է թողել Մաշտոցի աշակերտ և Սյունյաց վարդապետարանի երաժշտության ուսուցիչ Ստեփանոս Սյունեցին[6] (Ստեփանոս Սյունեցի Առաջին): Որոշ ուսումնասիրողներ համարում են, որ նա եղել է Սյուն-

1 **Ալեքսանյան Վ.**, Անանիա եպիսկոպոս Սյունեցի (5-րդ դար), «Էջմիածին» ամսագիր, թիվ Գ., 1999, էջ 71:

2 **Գալէմքէարեան Գ.**, Սիւնեաց դպրոցը, «Տաճար» շաբաթաթերթ, 1911, հ. 36, էջ 571: Հմմտ. Վ. Ալեքսանյան, նշվ. հոդվածը, էջ 72:

3 **Օրբէլեան Ստ.**, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 33:

4 Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 25:

5 **Մովսիսյան Ա.**, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (IX–XV դդ.), Երևան, 1958, էջ 87: Հմմտ. Լ. Գ. Խաչերեան, նշվ. աշխ., հտ Ա., էջ 284:

6 Լ. Գ. Սարգսյանը բացառում է V դ. Սյունյաց եպիսկոպոս և շարականագիր Ստեփանոս Սյունեցու (Առաջին) գոյությունը: Տե՛ս Լ. Գ. Սարգսյան, Կարծեցյալ Ստեփանոս Սյունեցի՝ շարականագիր V դարի, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, 1993, էջ 120-129: Լ. Գ. Սարգսյանից բացի՝ այդ տեսակետի կողմնակից են նաև այլ ուսումնասիրողներ: Տե՛ս Ա. Արևշատյան, Եվս մի անգամ Ստեփանոս Սյունեցու անձի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, N3, 2003, էջ 153-160: Նույնի Ստեփանոս Սյունեցի. Իրական անձը և վաստակը (Սյունեցի համանուն երկու երաժիշտների գոյության հարցի շուրջ), Հայ արվեստի հարցեր, հտ.2, Երևան, ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտի հրատ., 2008, էջ 23-34: Նույնի Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, Երևան, Կոմիտաս հրատ., 2003, էջ 18-20: Նույնի Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, Երևան, ՀՀԳԱԱ Գիտություն հրատ., 2013,էջ 22-24: Ստեփանոս Սյունեցուն և իր «Յարութեան» Ավագ օրհնություններին անդրադարձել է նաև Միեր Նավոյանն իր «Բյուզանդական ազդեցության վարկածը հայ հիմներգության կարգ (կանոն) ժանրի առնչությամբ» հոդվածում, տե՛ս Մանրուսում միջազգային երաժշտագիտական տարեգիրք, հտ. 2, Երևան, Ասողիկ հրատ., 2005, էջ 40-41, 81-89, 95-97 և այլն:

յաց եպիսկոպոս, սուրբ Թարգմանիչների (իմա՛ Մաշտոցի) աշակերտ և V դ. հեղինակ[1], թեև Ստեփանոս Օրբելյանի թվարկած և V դ. Սյունյաց եպիսկոպոսական աթոռը զբաղեցրած գահակալների շարքում բացակայում է Ստեփանոս Սյունեցու անունը[2]: Հնագույն Շարակնոցներում ամփոփված և Ս. Հարության տոնին Հայոց եկեղեցիներում երգված ութշարքանի ութսուն «Յարութեան» շարականները, որոնք համարվել են հայ հոգևոր երաժշտության ամենավաղ ինքնուրույն նմուշներ, մասնագիտական գրականության մեջ վերագրվել են Ստեփանոս Սյունեցու գրչին[3]:

Սյունյաց վարդապետարանի երևելի ուսուցչապետներից է VI դ. մատենագիր, տոմարագետ, պատմիչ, իմաստասեր, մեկնիչ, ճառերի հեղինակ և մեծավաստակ մանկավարժ, քերթողահայր[4] Պետրոս Սյունեցին: Ստեփանոս Օրբելյանը նրան մեծարում է հետևյալ խոսքերով. «քաջ հռետորն եւ անյաղթ փիլիսոփայն, լի իմաստութեամբ եւ կատարեալ առաքինութեամբ. Նախ աթոռ վարդապետաց Հայոց, քերթող[5] եւ թարգմանիչ, որ արար բազում թարգմանութիւնս, եւ արար ճառս իմաստալից ի ծնունդն Քրիստոսի եւ ընդդէմ քաղկեդոնականացնեւ այլ յոլովս, եւ մեկնեաց զխրթին եւ զդժուարիմաց բանս Հին եւ Նոր Կտակարանաց»[6]:

Ուսուցչապետ Պետրոս Սյունեցին և, առհասարակ, Սյունյաց վարդապետարանի ներկայացուցիչները զգալի ավանդ ունեն հունագիտության և հունաբան լեզվի ու գիտական ոճի ձևավորման և զարգացման գործում: Այս առնչությամբ Լեոն գրում է. «Վեցերորդ դարից հայ դպրոցն սկսում է ճյուղավորվել և ընդունել տարբեր գունավորումներ: Ամենանշանավորը Սյունյաց դպրոցն էր, որի առաջին խոշոր ներկայացուցիչը, եթե ոչ հիմնադիրը, Պետրոս եպիսկոպոսն էր: Այս դպրոցը պտուղներ տալիս էր համարյա երեք դար: Եվ նրա գլխավոր հատկանիշը հունագիտությունն էր, այնպես որ հելլենասերների գրականությունը գլխավորապես այս դպրոցի շուրջն էր ճոխանում: Նրան պատկանող մի շարք հոգևոր գործիչներ կրում էին «քերթող» գրական տիտղոսը, որ միաժամանակ գիտական տիտղոս էլ էր: Սյունյաց դպրոցն ամենից առաջ աչքի էր ընկնում իր հելլենաբանությամբ: Այս նշանակում էր, թե հունական լեզվի ձևերն ու ոգին մտան հայոց գրականության մեջ»[7]:

1 Ըստ Հ. Անասյանի՝ «Ստեփաննոս Սիւնեցի առաջինն, որ յաշակերտացանտի սրբոց թարգմանչաց», տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատոր Ա., Երևան, Հայկ. ՍՍՌԳԱ հրատ., 1959, էջ LXVIII: Նույն կարծիքին են նաև Մ. Աբեղյանը և Ն. Թահմիզյանը: Տե՛ս **Աբեղյան Մ.**, Հայոց հին գրականության պատմություն, Երկեր, հտ. Գ., գիրք Ա., Երևան, ՀՍՍՀԳԱ հրատ., 1968, էջ 537: **Թահմիզյան Ն.**, Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարության ավագ օրհնությունները, Էջմիածին ամսգ., N 2, 1973, էջ 29-39:

2 Տե՛ս **Սարգսյան Լ. Գ.**, Կարծեցյալ Ստեփանոս Սյունեցի՝ շարականագիր V դարի, էջ 123:

3 Տե՛ս **Թահմիզյան Ն.**, Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարության ավագ օրհնությունները, էջ 29-39, տե՛ս նաև նույն հեղինակի «Ստեփանոս Սյունեցի Առաջին» բառահոդվածը Հայկական սովետական հանրագիտարանում, հտ. 11, Ե., 1985, էջ 137-138:

4 Տե՛ս **Օրմանյան Մ.**, Ազգապատում, հտ. Ա., գիրք Ա., Բեյրութ, 1959, էջ 1669:

5 Միջնադարում «Քերթող» կամ «Քերթողահայր» պատվանունը կամ մակդիրը շնորհվել է հայ նշանավոր քերականներին, գրողներին, բանաստեղծներին, հռետոր-ճառագիրներին, կրթության հմուտ մշակներին, աղբյուրագետներին, մատենագիրներին և այլն:

6 **Օրբէլեան Ստ.**, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 131: Հմմտ. **Խաչերեան Լ. Գ.**, նշվ. աշխ., էջ 286: Պետրոս Սյունեցու մասին մանրամասն տե՛ս **Տեր-Մկրտչյան Գալուստ**, Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս. տե՛ս **Տեր-Մկրտչյան Գալուստ**, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ., աշխատասիրությամբ՝ **Պ. Հ. Հակոբյանի**, Ս. Էջմիածին, 1998: **Հ. Ներսէս Ակինեան**, Պետրոս եպս. Սիւնեաց, ՀԱ, 1903, 1904: **Հ. Բարսեղ Սարգիսեան**, Պետրոս Սիւնեցի, Բազմավէպ, 1904, էջ 65-71:

7 **Լեո**, Երկերի ժողովածու, Երկրորդ հատոր, Հայաստան հրատ., Երևան, 1967, էջ 189:

Մեծ հեղինակություն և ակնածանք վայելող Սյունյաց եպիսկոպոս(547–556 թթ.) ՊետրոսՍյունեցին մասնակցել և փայլել է 554 թ. գումարված Դվինի երկրորդ եկեղեցաժողովում[1]: Պետրոս Սյունեցին ծավալել է մատենագրական բեղուն գործունեություն, հեղինակել է ճառեր, ներբողներ, դավանաբանական և մեկնողական աշխատություններ[2]: Ուսուցչապետ Պետրոս Սյունեցու մատենագրական ժառանգությունը, ցավոք, ամբողջությամբ մեզ չի հասել[3]: Պահպանվել են առանձին գործեր միայն կամ մատենագրական այլ երկերում քաղվածաբար մեջբերված պատառիկներ:

Սյունյաց վարդապետարանի ականավոր ուսուցչապետներից է Մաթուսաղան: Նա զբաղեցրել է նաև Սյունյաց եպիսկոպոսական աթոռը (634–652[4] թթ.) և հռչակված էր որպես նշանավոր աստվածաբան, իմաստասեր և քերթող, ճարտասան և մեկնիչ: Մաթուսաղան Սյունյաց վարդապետարանի սաներից էր, իսկ հետագայում նաև գլխավորեց այս նշանավոր ուսումնագիտական կենտրոնը: Մաթուսաղան իր գործուն մասնակցությունն է բերել երկրի եկեղեցաքաղաքական կյանքին: Հովհան Մայրագոմեցու հետ նա հանդես է եկել իբրև Հայոց եկեղեցու դավանական և քաղաքական անկախության նախանձախնդիր պաշտպան: Պատմիչ Օրբելյանը խորին ակնածանքով ու գովեստով է արտահայտվել Մաթուսաղայի մասին. «Այս Մաթուսաղայ էր սնեալ ամենայն

1 Տե՛ս **Օրմանյան Մ.**, Ազգապատում, հտ. Ա., գիրք Ա., Բեյրութ, 1959, էջ 1669:

2 Պետրոս Սյունեցու՝աստվածաբանական, գեղարվեստական արժանիքներով աչքի ընկնող առաջին երկը՝ «Գովեստ ի սուրբ Աստուածածինն եւ միշտ կոյսն Մարիամ...» խորագրով ներբողն է: Այն Տիրամորը նվիրված երկերի շարքում հնագույնն է հայ եկեղեցական մատենագրության մեջ: Շարադրանքն ուղեկցվում է աստվածաբանական խորը, համակողմանի մեկնաբանությամբ: Հաջորդը«Յաղագս հաւատոյ» վերտառությամբ մի աշխատություն է, որն առաջին երեք տիեզերաժողովների, ինչպես նաև Քաղկեդոնի և Եփեսոսի երկրորդ եկեղեցական ժողովների համառոտ պատմությունն է: Պետրոս Սյունեցու մյուս աշխատությունը Սուրբ Ծննդեան մի ճառ է, որից փոքրիկ պատառիկներ են պահպանվել միայն: Դրանք առկա են Ստեփանոս Սյունեցու «Յաղագս անապականութեան մարմնոյն»և Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» աշխատություններում: Պետրոս Սյունեցու անվամբ հաջորդ երկը՝ «Հարցմունք յաղագս մարմնաւորութեան Տեառն», ներկայացնում է Աղվանից Վաչագան թագավորի հարցումներն ու Պետրոսի պատասխանները: Ըստ Գ. Տեր-Մկրտչյանի Աւուրիշ ուսումնասիրողների՝ սա վավերական երկ չէ:«Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի առ Սուրբն Յիզտիբուզտի յորժամ ի հանդի էր ի Դվին» երկը վերաբերում է ս. Յիզտիբուզտի վկայաբանությանը: Պետրոսի թուղթը գովում է ս. Յիզտիբուզտի՝ նահատակվելու պատրաստակամությունը: Շարադրված է, ամենայն հավանականութեամբ, 549-553 թթ.: Պետրոս Սյունեցին հեղինակ է նաև դավանաբանական («Ճառ ընդդէմ քաղկեդոնականաց»), մեկնողական («Մեկնութիւն խրթին եւ դժուարիմաց բանից Հին եւ Նոր կտակարանաց»), ներբողական («Ներբողեան ի Բաբիկ Սիւնի») երկերի, որոնք մեզ չեն հասել: Այս երկերից օգտվել կամ իր աշխատության մեջ դրանց մասին հիշատակել է Ստեփանոս Օրբելյանը:

3 Տե՛ս **Քյոսեյան Հ.**, Հայ եկեղեցական մատենագրություն, էջ 140 - http://qdk.am/wp-content/uploads/2015/02/%D5%80%D5%A1%D5%B5-%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A1%D5%BF%D5%A5%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%A2-%D5%94%D5%B5%D5%B8%D5%BD%D5%A5%D5%B5%D5%A1%D5%B6.pdf

4 Ըստ Հ. Քյոսեյանի՝Մաթուսաղան Սյունյաց եպիսկոպոսական աթոռին գահակալել է 634-643 թթ.: Տե՛ս Հ. Քյոսեյան, Հայ եկեղեցական մատենագրություն, էջ 157 - http://qdk.am/wp-content/uploads/2015/02/%D5%80%D5%A1%D5%B5-%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A1%D5%BF%D5%A5%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%A2-%D5%94%D5%B5%D5%B8%D5%BD%D5%A5%D5%B5%D5%A1%D5%B6.pdf: Ըստ Օրբելյանի՝ Մաթուսաղան Սյունյաց մետրոպոլիտական աթոռը զբաղեցրել է 18 տարի: Տե՛ս **Օրբելյան Ստ.**, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 139: Հմմտ. **Խաչերեան Լ. Գ.**, նշվ. աշխ., հտ Ա., էջ 308:

պարկեշտութեամբ. ուսեալ զքերթողութիւնն եւ վարժեալ ճարտասանականաւն. իմտացեալ փիլիսոփայական արուեստից, լի ամենայն իմաստութեամբ եւ կատարեալ գիտութեամբ»[1]:Մաթուսաղայի գլխավորած Սյունյաց վարդապետարանում ուսանել են հետագայում նշանավոր դարձած շատ մեծանուն հոգևոր–մշակութային գործիչներ: Ուսուցչապետ Մաթուսաղայի և Սյունյաց վարդապետարանի հռչակի մասին է վկայում այն փաստը, որ Հայոց Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսը (615–628 թթ.) իր եղբորորդի Թեոդորոս Քռթենավորին ուսանելու է ուղարկում ոչ թե կաթողիկոսական դպրեվանք, այլ Սյունյաց վարդապետարան:

Քերթողի, փիլիսոփայի մեծ հռչակը ենթադրել է տալիս, որ Մաթուսաղան գրել է շատ աշխատություններ:Սակայն, ցավոք, Բյուզանդիայի Հերակլ կայսրին ուղղված թուղթը (նամակ) նրանից մեզ հասած միակ երկն է, որը, բարեբախտաբար, ժամանակին մտել է Տոնամակ[2] կամ Ճառընտիր[3] ժողովածուներ (բայց այսօր հայտնի գրչագրերում այն բացակայում է), իսկ հետո զետեղվել է Ստեփանոս Օրբելյանի Պատմության մեջ (գլ. ՀԹ): Իսկ ի՞նչ առիթով է գրվել այդ թուղթը: 633 թ. Կարինի ժողովին մասնակցելու համար Հայոց իշխան Թեոդո-

1 **Օրբէլեան Ստ.**, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 112-113:

2 Նաև՝ Տոնամակ, Տոնանամակ: Հայ Առաքելական Եկեղեցու ծիսամատյան: «Ճաշոցի» բովանդակությունը «Տերունի տոների» տարեկան տոնակարգի սահմանումն է՝ համապատասխան ընթերցվածներով: Պարունակում է կեսօրվա («ճաշու») ժամերգության ընթերցվածները և երգասացությունները: «Ճաշոցի» նախնական կազմավորումն ավանդաբար կապվում է Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Հակոբոս Տյառնեղբոր (I դ.) և Կյուրեղ Երուսաղեմացու անունների հետ:Ենթադրվում է, որ այլ ծիսամատյանների հետ Ճաշոցը հայերեն է թարգմանվել և կարգավորվել V դ.: Ընթերցվելիք նյութը հիմնականում քաղված է Հին և Նոր կտակարաններից, հատկապես՝ Գործք առաքելոցից, որն ընդմիջարկվել է սկզբնական շրջանում՝ համապատասխան սաղմոսներով և մարգարեական օրհնություններով, իսկ ավելի ուշ՝ նաև շարականներով: Հայտնի են Ճաշոցի երուսաղեմյան, մինչվկայասերյան և վկայասերյան տարատեսակները, որոնց բոլորին բնորոշն այն է, որ տոները ամսաթվային չեն, այլ շարժական՝ շաբաթվա օրերով սահմանված: Ժամանակի ընթացքում «Ճաշոցը», մասամբ դավանական նկատառումներով և մասամբ անփութության հետևանքով, ենթարկվել է զանազան փոփոխությունների և այլայլումների, որոնք VIII դ. վերացրել է Հովհաննես Գ Օձնեցի կաթողիկոսը (717–728 թթ.): Նա կարգավորել և վերստին հաստատել է Կյուրեղ Երուսաղեմացու սահմանած ընթերցումները: XI դ. Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի (1066–1105 թթ.) ջանքերով «Ճաշոցը» մուտք է գործել նաև տոմարական տոնակարգը՝ տոների ամսաթվային նշումներով: Նույն շրջանում «Տերունի տոների» կողքին Ճաշոցում իրենց ընթերցվածներով սահմանվել են նոր՝ հայկական տոներ: Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 661, http://www.armenianreligion.am/am/Encyclopedia_of_armenian_religion_chashots:

3 Ճառերի ընտրանի, ժողովածու՝«Տոնական»: Բովանդակում է ճառեր, քարոզներ, մեկնողական երկերից քաղված առանձին հատվածներ, աղոթքներ, տեսիլքներ, վարքեր, վկայաբանություններ, պատմագրական գործերից բերված առանձին հատվածներ, թղթեր (նամակներ), կանոններ, զրույցներ և այլն: Նախապես կոչվել է Տոնական, քանի որ ամփոփել է համաքրիստոնեական, ինչպես նաև հայ սրբերի վկայաբանությունները՝ համակարգված ըստ քրիստոնեական տոների: Հետագայում ժողովածուի մեջ ներմուծվել են ճառական միավորներ (այստեղից էլ՝ «Ճառընտիր» անվանումը): «Ճառընտիրը» հայ միջնադարի ձեռագրական մշակույթի մեջ կարևոր տեղ է զբաղեցնում: Նյութերի բազմազանությունն ու բովանդակության հարստությունը այն դարձնում են հայագիտության ամենատարբեր ճյուղերի համար տևապես օգտագործելի և շահեկան մի սկզբնաղբյուր: «Ճառընտիր» ժողովածուի կազմավորումը կապվում է Սողոմոն Մաքենացու անվան հետ: Առաջին անգամ նրա ջանքերով 747 թ. մեկտեղվել են ճառական բնույթի զանազան նյութ-միավորներ: «Ճառընտիր» ժողովածուի նյութերը հիմնականում դասավորված են համաձայն «Տոնացույցի» և պատշաճեցված են տվյալ տոնի խորհրդին՝ այն մեկնաբանելու կամ տարփողելու նպատակով: «Ճառընտիր» ժողովածուները, ենթարկվելով դարի պահանջին և հոգևոր շահագրգռություններին, ժամանակի ընթացքում համալրվել են նորանոր ու բազմաբնույթ նյութերով: Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, էջ 662, http://www.armenianreligion.am/am/Encyclopedia_of_armenian_religion_charyntir:

րոս Ռշտունին և նախարարները Հայոց կաթողիկոս Եզր Ա Փառաժնակերտցուն (630 – 641 թթ.) խորհուրդ են տվել որպես գիտուն աստվածաբանների իր հետ տանել Մաթուսաղային և Հովհան Մայրավանեցուն՝ հույների հետ դավանական խնդիրներում ճիշտ կողմնորոշվելու համար: Մաթուսաղան, չցանկանալով թողնել վարդապետարանի գործը և պատճառաբանելով տկարությունը, Կարին է ուղարկել իր աշակերտ, Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի եղբորորդի Թեոդորոսին՝ հայոց դավանության մասին բյուզանդական Հերակլ կայսրին ուղղված իր թղթով: Դա Հերակլ կայսրի՝ հայերին ուղարկած դավանական գրի պատասխանն էր[1]:

Ահա այդ ժողովում ընթերցվելու նպատակով Մաթուսաղան Հերակլ կայսրին է հղում վերոհիշյալ թուղթը: Թղթում բացատրվում և հիմնավորվում է հայ եկեղեցու դավանանքը, մասնավորապես քրիստոսաբանությունը: Մաթուսաղան հերքել է եվտիքականությունը, նեստորականությունը, քաղկեդոնականությունը, անդրադարձել երևութականության, անապականության խնդիրներին: Հեղինակը խոսում է «Երգ Երեք սրբենի» («Սուրբ Աստված») սրբասացության մեջ «խաչեցար»-ի հավելման մասին և հիմնավորում այդ հարցում Հայոց եկեղեցու ուղղափառությունը: Անդրադառնալով այն մեղադրանքներին, թե Հայոց եկեղեցին «Աստված խաչված» և «անմահն խաչված» է ասում, Մաթուսաղան պատասխանում է, որ այստեղ ոչ մի հերետիկոսություն չկա, քանզի «անչարչարը չարչարվեց չարչարողով, անմահը մեռավ մահկանացուով, այսինքն թե՝անչարչար Բանն Աստված մեռավ իր մարմնով»[2]: Մաթուսաղան շեշտել է, թե աստվածայինի և մարդկայինի անքակտելի և անճառելի միավորությամբ է, որ ասում ենք «Աստված խաչվեց» կամ «Աստված չարչարվեց», հետևաբար, «ով չի ասում «Աստված խաչված», չի էլ ընդունում Աստծուն Կույսից ծնված, իսկ Կույսին՝ Աստվածածին... քանի որ Հիսուս Քրիստոսը ուրիշ մեկը չէ, Բանն Աստված՝ ուրիշ, այլ՝ նույն և մեկ Աստվածն է՝ ծնված Կույսից, իր աստվածությամբ նույն անչարչարելին, նույն անմահն ու նույն մեռածն իր մարմնով»[3]: Այս հիմամբ հաստատելով «Աստված խաչված» և «անմահ խաչված» ծիսական բանաձևի կիրարկման անհրաժեշտությունը՝ Մաթուսաղան վկայակոչում է Քաղկեդոնի ժողովին մասնակցած Հոբնաղ Երուսաղեմցուն: Ըստ վերջինիս՝ այդ բանաձևը, իբրև ծիսական կայուն ընթերցված, հնուց անտի կիրառվել է երուսաղեմյան «Պատարագամատույցի» մեջ: Սրանով Մաթուսաղան շեշտում է բանաձևի վաղնջական ծագումը և վավերականությունը: Ընդհանրապես Մաթուսաղան Հայոց եկեղեցու ուղղափառությունը դավանական տարբեր հարցերում հիմնավորել է Ս. Գրքից վկայակոչումներով և եկեղեցու հայրերի գրվածքներից մեջբերումներով:

Սյունյաց վարդապետարանի երախտաշատ և բազմարդյուն ուսուցչապետներից է Մովսես Քերթողը (Մովսես Սյունեցի): Նա VII դ. երկրորդ կեսի նշանավոր հոգևոր-մշակութային գործիչ է, քերական, մեկնիչ, աստվածաբան, թարգմանիչ, ծիսագետ և երաժիշտ-տեսաբան: Ըստ պատմիչ Օրբելյանի՝ Մովսես Քերթողը Սյունյաց եպիսկոպոսական աթոռին գահակալել է յոթ տա-

1 Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտ., էջ 666, http://www.armenianreligion.am/am/Encyclopedia_of_armenian_religion_matusagha:

2 **Օրբելյան Ստ.**, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 141:

3 Նույն տեղում, էջ 142:

րի[1]: Մովսես Քերթողին աշակերտել են Թեոդորոս Քերթողը, Պետրոս Քերթողը (Պետրոս Սյունեցի), Եզրաս Անգեղացին: Թեոդորոս Քերթողը թերևս նույն Թեոդորոս Քռթենավորն է, որը պետք է դառնար նշանավոր Հովհան Իմաստասեր Օձնեցու ուսուցիչը: Իսկ Եզրաս Անգեղացին իր մեծանուն ուսուցչի նման հայտնի է դարձել ճարտասանության դասերով և թողել բազում աշակերտներ[2]:

Բացի մանկավարժական բեղուն գործունեությունից՝ Մովսես Քերթողը զբաղվել է նաև մատենագրությամբ: Դատելով նրան վերագրված և վերագրելի երկերի բովանդակությունից և լեզվաոճական որակից՝ քաջատեղյակ է եղել հունարենին, մասնավորաբար եռյակ գիտություններին՝ քերականությանը, հռետորությանը և իմաստասիրությանը:

Մովսես Քերթողին են վերագրվում մի շարք թարգմանություններ, մեկնություններ, ճառեր, աղոթքներ և այլ գործեր: Պահպանվել է Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» երկի՝ Մովսես Քերթողի գրած մեկնությունը, որն աչքի է ընկնում առհասարակ արվեստի և մասնավորապես՝ քերականական արվեստի ռացիոնալիստական ըմբռնումներով: Արժեքավոր է Մովսես Քերթողի «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» գրվածքը, որտեղ հայ միջնադարյան երաժշտատեսական մտքի պատմության մեջ առաջին անգամ տրված է հայկական ութձայն համակարգի զուտ եկեղեցական շրջանակներում ձևավորված նորովի գեղագիտական մեկնությունը:

Մովսես Քերթողին են վերագրվում նաև հետևյալ շարականները. Աստվածահայտնության ճրագալոյցի, Ծննդյան կամ Աստվածահայտնության Ա-Ը ավուրց, Կարգ Հարության, ԱՁ-ԴԿ՝ հանդերձ Մեծացուսցեներով, Տյառնընդառաջի և Վերափոխման Ա ավուրն: Մովսես Սյունեցու շարականներն աչքի են ընկնում ոչ միայն քերթողական արվեստին բնորոշ անուրանալի արժանիքներով, այլև աստվածաբանական նուրբ ձևակերպումներով:

Մովսես Սյունեցու անունով ձեռագրերում հանդիպում են նաև աղոթքներ, որոնցում աղերսներ են նկատվում արևելաքրիստոնեական վաղ աստվածախոսական ավանդների հետ:

Հայ հին մատենագրության մեջ Մովսես Քերթող Սյունեցին նույնացվել է Մովսես Խորենացու հետ[3]:

Սյունյաց վարդապետարանի թերևս ամենահռչակավոր ուսուցչապետն է Ստեփանոս Սյունեցին (Ստեփանոս Քերթող, Երկրորդ), որը նշանավոր մատենագիր էր, աստվածաբան, իմաստասեր, ճարտասան, մեկնիչ, թարգմանիչ, քե-

1 Տե՛ս նույն տեղում, էջ 147:

2 Տե՛ս **Քյոսեյան Հ.**, Հայ եկեղեցական մատենագրություն, էջ 165 - http://qdk.am/wp-content/uploads/2015/02/%D5%80%D5%A1%D5%B5-%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A1%D5%BF%D5%A5%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%A2-%D5%94%D5%B5%D5%B8%D5%BD%D5%A5%D5%B5%D5%A1%D5%B6.pdf

3 Թերևս այդ շփոթի հետևանքով է, որ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարանում «Մովսես Քերթող» բառահոդվածի հեղինակ Ա. Արևշատյանը Մովսես Սյունեցու մասին գրում է. «Հայ առաքելական եկեղեցու տոնելի սուրբ: ...Հայ եկեղեցին ս. Մովսես Քերթողի հիշատակը նշում է Խաչվերացի հինգերորդ կիրակիին նախորդող շաբաթ օրը՝ «սրբոց թարգմանչաց վարդապետաց» տոնի հետ, հոկտեմբեր ամսին»: Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 766: Մենք, այնուամենայնիվ, կարծում ենք, որ Սուրբ Թարգմանիչների հետ տոնախմբվում է ոչ թե Մովսես Քերթող Սյունեցու հիշատակը, այլ պատմահայր Մովսես Քերթողահայր Խորենացու հիշատակը:

ական, երաժիշտ, բանաստեղծ և ժամանակակիցների կողմից մեծարվում էր «Սիւն երկնի, խարիսխ հաւատոյ» խոսքերով[1]: Նա Դվինի ավագերեց Սահակի որդին էր, ծնվել է մոտ 660–670-ական թթ. և եղերականորեն մահկանացուն կնքել 735 թ. հուլիսի 21-ին: Նախնական կրթությունը ստացել է Դվինի կաթողիկոսարանի դպրոցում, ապա ուսումը շարունակել Մաքենյաց վանքի դպրոցում՝ աշակերտելով Սողոմոն Մաքենացուն, այնուհետև սովորել է Սյունյաց վարդապետարանում՝ աշակերտելով Մովսես Քերթողին: Նորանոր գիտելիքներ ձեռքբերելու և ուսումը կատարելագործելու տենչը հագեցնելու նպատակով Ստեփանոս Սյունեցին մեկնում է Կ.Պոլիս, այնուհետև Աթենք, սովորել է հունարեն, լատիներեն, ուսումնասիրել աստվածաբանություն, փիլիսոփայություն, երաժշտություն և այլ գիտություններ: Մոտ 728 թ. Ստեփանոս Սյունեցին վերադարձել է Հայաստան, դասավանդել Դվինի կաթողիկոսարանի դպրոցում, ծավալել բեղմնավոր մանկավարժական և մատենագրական գործունեություն: Ապա ձեռնադրվել է եպիսկոպոս և կարգվել Սյունյաց մետրոպոլիտ: Պատմիչ Օրբելյանը մեծ ոգևորությամբ ու ակնածանքով է խոսում Ստեփանոս Սյունեցու մասին. «Սրտիս գործարանի բուռն բաղձանքը դրդում է միտքս՝ իմ այս շարադրանքի մեջ հոմերական քերթողությամբ ստեղծագործել, հորինել ելևէջուն գեղեցիկ տողեր, հյուսել ախորժալուր գովեստներ՝ բոլորի սիրելիի ներբողումը հոժարակամ լսողների ականջներում թնդացնելու համար: Նկատի ունեմ բոլոր էակներից անհամեմատելիին, իմաստունին և սերովբեներից սպասարկված Աստծու մարդուն՝ Ստեփանոս իմաստասերին և անհաղթ հռետորին՝ Սյունյաց մետրոպոլիտին...»[2]:

Ռաբունապետ Ստեփանոս Սյունեցին թողել է մեծածավալ գրական ժառանգություն՝ մեկնողական, դավանաբանական աշխատություններ, թարգմանական երկեր, հոգևոր երգեր, տաղեր: Նրա անունով մեզ հասած երկերից հատկապես նշանավոր են «Մեկնութիւն չորից Աւետարանչացն», «Պատճառք և թելադրութիւնք Առաջին տեսլեանն Եզեկիէլի», «Մեկնութիւն Դանիէլի», «Մեկնութիւն Յոբայ», «Մեկնութիւն Արարածոց», «Մեկնութիւն քերականին», «Մեկնութիւն ժամակարգութեան» աշխատությունները:

Ստեփանոս Օրբելյանի «Մեկնութիւն չորից Աւետարանչացն» երկը Սյունյաց մեկնողական դպրոցի հին շրջանի մեզ հասած միակ ամբողջական երկն է[3]:

«Մեկնութիւն ժամակարգութեան» աշխատության մեջ Ստեփանոս Սյունեցին ոչ միայն բացատրել է ծիսական պարագաների խորհուրդը, այլև պահպանել ծիսակարգի հնավանդ մաքրությունն ու ազգային նկարագիրը՝ զերծ

1 Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտ., էջ 928:

2 **Օրբելյան Ստ.**, Սյունիքի պատմություն, էջ 147-148:Ստեփանոս Սյունեցու քույրն էր VIII դարի երգահան, երաժիշտ Սահակադուխտը (Սահակդուխտ):

3 Այս երկը երկար ժամանակ կորած է համարվել: 1917 թ. Գարեգին եպս. Հովսեփյանը այն գտել է 1155 թ. գրված մի ձեռագրում: Ստեփանոս Սյունեցին մեկնությունը գրել է Հայոց կաթողիկոս Դավիթ Ա Արամոնեցու (728–741 թթ.) պատվերով: Նա մեկնել է, երբեմն էլ՝ ստուգաբանել, Ավետարանի «դժվարապատում» բառերն ու խոսքերը, կատարել բնագրային ճշգրտումներ: Այս սկզբունքով մեկնել է Մատթեոսի Ավետարանը, ապա մյուս երեքի՝ Մարկոսի, Ղուկասի, Հովհաննեսի Ավետարանների այն հատվածները, որոնք չեն եղել Մատթեոսի Ավետարանում: Մատթեոսի, Մարկոսի (մեկնված է միայն 14-րդ գլխի 53 համարը), Ղուկասի, Հովհաննեսի Ավետարանների մեկնությունները պահվում են Մատենադարանում (ձեռ. թ. 5551, Հովհաննեսինը նաև՝ ձեռ. թթ. 1349, 1350, 2520, 9372) և Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի ձեռագրատանը (ձեռ. թ. 1046): Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտ., էջ 929:

մնալով օտարամուծություններից:Մեկնությունը հայտնի է ընդարձակ և համառոտ տարբերակներով: Դավանաբանական հայեցակետից ուշագրավ է Պատարագի Երից սրբասացությանը («Երգ Երեքսրբենի») նվիրված Դ գլուխը, որտեղ հեղինակը հիմնավորում է «խաչեցար» ասելու Հայոց եկեղեցու տեսակետը: Ստեփանոս Սյունեցու «Մեկնութիւն ժամակարգութեան», ինչպես և «Ի խորհուրդ Եկեղեցւոյ», «Խորհուրդ եւ կարգաւորութիւն Եկեղեցւոյ», «Պատճառ հիմնարկութեան Սրբոյ Եկեղեցւոյ» երկերը հետաքրքրական են պատարագների տեսական բովանդակության ուսումնասիրման, եկեղեցական ճարտարապետության առանձին մասերի աստվածաբանական բացատրության, այսինքն՝ խորհրդանշանի աստվածաբանության տեսանկյունից: Նշանակալի է Ստեփանոս Սյունեցու բերած նպաստը ժամերգության կարգավորման, ժամակարգության մեկնաբանման բնագավառում: Նա տվել է նաև գիշերային ժամերգության խորհրդի, ինչպես նաև եկեղեցու հիմնարկեքի բացատրությունը:

Ստեփանոս Սյունեցին անմասն չի մնացել ժամանակի եկեղեցաքաղաքական և դավանաբանական պայքարից: Այդ մասին են վկայում նրա աստվածաբանական-դավանաբանական աշխատությունները[1]:

Ըստ պատմամատենագիտական վկայությունների՝ ժամերգության կանոնակարգումը, շարականային կանոնի մեջ հոգևոր երգի զետեղումը ևս կատարել է Ստեփանոս Սյունեցին: Նրան են վերագրվել շարականների ամբողջական շարքեր (օր.՝ «Մարտիրոսաց և ննջեցելոցը»), Հարության Ավագ օրհնությունները, սուրբ Խաչին նվիրված տաղեր և այլն, ինչպես նաև Հինանց և պահոց սաղմոսները: Ստեփանոս Սյունեցու անվան հետ են կապվել մի շարք կարևոր տեղաշարժեր և բարեփոխումներ (ութձայն համակարգի տեսական իմաստավորում և բարեկարգում, կանոնի ժանրի վավերացում, խազերի կիրառման նախնական փորձեր): Դիոնիսիոս Թրակացու «Մեկնութիւն քերականին» երկասիրության մեջ Ստեփանոս Սյունեցին ի մի է բերել V–VII դդ. երաժշտական գեղագիտությանը վերաբերող Դավիթ Անհաղթի,Դավիթ Քերականի և իր ուսուցիչ Մովսես Սյունեցու ձեռքբերումները՝ հարստացնելով այդբնագավառն իր դիտարկումներով և դատողություններով: Աշխատության մեջ նա անդրադարձել է երաժշտական արվեստի դասակարգման, գեղագիտական կերպարի ստեղծման ձևերի, միջոցների ու հնարանքների, գուսանական ու հոգևոր երաժշտության փոխհարաբերության և այլ հարցերի[2]:

Նշանակալի է նաև Ստեփանոս Սյունեցու թարգմանական ժառանգությունը: Նրա բեղուն գրչի արգասիքն են «Վարք Դիոնիսիոսի և լուծումն գրոց նորին», «Մատենագրութիւնք Դիոնիսիոսի Արիսպագացւոյ», «Կիւրղի Աղէքսանդրացւոյ Գիրք Պարապմանց», «Նեմեսիոսի եպիսկոպոսի Եմեսացւոյ՝ Յաղագս բնութեան մարդոյ», «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ՝ Յաղագս կազմութեան մարդոյ», Գևորգ Պիսիդեսի «Յաղագս Վեցօրեայ արարչութեան, «Տեսիլ սրբոյն Մեթոդի եպիսկոպոսի Պատարայ և վկայի յաղագս անցելոյն, ներկայիս եւ ապառնեացն...», Գերմանոս պատրիարքի «Հաւատոյ թուղթ», Աթանաս Ալեքսանդրացու «Ճառք» և այլ երկերի հայերեն թարգմանությունները:

1 Տե՛ս Ստեփանոս Սյունեցու հետևյալ երկերը. Վասն անապականութեան մարմնոյն Քրիստոսի, Պատասխանի թղթոյն Գերմանոսի, Պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի, Պատասխանի առ վարդապետսն Աղուանից:

2 Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտ., էջ 929:

Սյունիք նահանգի նշանավոր ուսումնագիտական կենտրոններից էր Մաքենոցաց կամ Մաքենյաց վանքի դպրոցը: Մաքենյաց վանքի մասին պատմական տեղեկությունները VII դարից են: VIII դարից Մաքենյաց վանքում գործել է վարդապետարան–դպրոց, որը նշանակալից դեր է կատարել դպրության, մանավանդ եկեղեցական կարգերին վերաբերող գրականության ասպարեզում. տվել է շատ բարձրաստիճան հոգևորականներ: Այստեղ է ուսանել և գործել Ստեփանոս Սյունեցին (Ստեփանոս Քերթող), ինչպես նաև Հայոց կաթողիկոս և պատմիչ Հովհաննես Ե Դրասխանակերտցին (898–929 թթ.), Վահան Գողթնացին, ապագա կաթողիկոսներ Սողոմոն Ա Գառնեցին (791–792 թթ.), Մաշտոց Ա Եղիվարդեցին (897–898 թթ.): Պատմիչ Մովսես Կաղանկատվացու վկայությամբ՝ վանքը մեծ համբավ է ձեռք բերել հատկապես Սողոմոն Գառնեցու վանահայրության տարիներին (760–ական թթ)[1]: Մաքենյաց վանքի դպրոցում դասավանդել են փիլիսոփայություն, աստվածաբանություն, սաղմոսերգություն, երաժշտություն:XI դ. սկզբին վանքը որոշ ժամանակ եղել է Գեղամա թեմի եպիսկոպոսանիստը: Մաքենյաց վանքը հզորանալով անկախացել է Սյունյաց մետրոպոլիտությունից և իշխել ու հոգևոր ղեկավարություն իրականացրել ողջ Գեղարքունիք գավառում՝ միայն 1513 թ. ընդունելով Տաթևի վանքի գերակայությունը[2]:

VIII դ.Մաքենյաց վանքի առաջնորդը և ուսումնագիտական կենտրոնի ուսուցչապետն էր ականավոր մանկավարժ, գիտնական և մատենագիր Սողոմոն Մաքենացին: Նա ստացել էր իր ժամանակի փայլուն կրթություն: Սողոմոն Մաքենացին աղբյուրներում հիշվում է «Հրաշալի այր», «Հայաստանեայցն պարծանք» պատվանուններով: Մաքենացու առաջնորդության տարիներին հռչակվել է իր իսկ հիմնած և մոտ մեկ դար գործած Սյունիքի այս ուսումնագիտական կենտրոնը՝ դառնալով Գեղարքունիք գավառի ամենանշանավոր կրոնամշակութային կենտրոնը: Ուսուցչապետ Սողոմոն Մաքենացին մասնակցել է 726 թ. Մանազկերտի եկեղեցական ժողովին, իսկ 740 թ.՝ Աղվանից Միքայել կաթողիկոսի հրավիրած Շամխորի ժողովին և գործուն մասնակցություն ունեցել Վրաց կաթողիկոսին ուղղված նախատինքի թղթի կազմմանը:

Հակառակ «Հարանց հայր» Սողոմոն Մաքենացու վայելած մեծ հեղինակության, եկեղեցաքաղաքական, մշակութային կյանքին բերած նպաստի՝ շատ քիչ բան է հայտնի նրա մատենագրական գործունեությունից: Մեզ են հասել սոսկ առանձին նշխարներ նրա աստվածաբանական ժառանգությունից: Այսպես, «Մեծի գիտնականի տեառն հաւր Սողոմոնի Մաքենոցաց առաջնորդի ընդդէմ Քաղկեդոնի» խորագրով դավանաբանական մեկ երկում, որը մեզ հասել է միակ ձեռագրով[3], խոսվում է երից սրբասացության մասին, վարդապետորեն հիմնավորվում է Հայոց եկեղեցու դիրքորոշումը: Այս երկը, սակայն, ամբողջական չէ: Մոտ 747 թ.Սողոմոն Մաքենացին կազմել է տերունական տոների լուսաբանիչը և նահատակների հիշատակարանը՝ «Տոնական»[4] ծիսական ժողովածուն, որի համար ժամանակակիցները նրան շնորհել են «Հարանց հայր» պատվանունը:

1 Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը՝ **Վարագ Առաքելյանի**, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1983, էջ 313-314:

2 Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտ., էջ 711:

3 Տե՛ս ՄՄ, ձեռ. հ. 2966, թ. 153 ա-բ:

4 Տե՛ս **Օրբելյան Ստ.**, Սյունիքի պատմություն, էջ 148:

Մաքենացին խմբագրել է Մեսրոպ Մաշտոցին նվիրված «Փոքր Կորյուն» պատմագիրքը, Վահան Գողթնացու վարքի երկրորդ տարբերակը:

VIII դ. 40-ական թթ. Մաքենյաց վանքի միաբանության անդամների շրջանում առաջացած անհամաձայնությունների պատճառով Սողոմոն Մաքենացին իր համակիրների հետ տեղափոխվել և հաստատվել է Ջավախքի Չրեսկ կոչված վանքում, որտեղ հիմնել է նոր միաբանություն: Սողոմոն Մաքենացին մահացել է Չրեսկում, հետագայում միաբանության անդամներն աճյունը տեղափոխել են Մաքենիս[1]:

Նշված ժամանակաշրջանում Սյունիքի նշանավոր ուսումնագիտական կենտրոններից էր Տաթևի վարդապետարանը: Տաթևի ուսումնագիտական կենտրոնի գործունեության սկիզբն ընդունված է համարել IX դ. վերջին քառորդը, երբ Սյունյաց իշխանանիստ Շաղատ գյուղաքաղաքից Տաթևի վանք է տեղափոխվել Սյունյաց վարդապետարանը: Պատմիչ Օրբելյանը Տաթևի ուսումնագիտական կենտրոնը բնորոշել է որպես «առաջին՝ գլուխն ամենեցունցվան օրէից եւ աղբիւր շնորհաբաշխութեան տանն Սիսական... »[2]:

Տաթևի ուսումնագիտական կենտրոնն ունեցել է զարգացման երկու կարևոր շրջափուլ՝ 1. վարդապետարանական և 2. համալսարանական: Վարդապետարանական շրջափուլն ընդգրկում է X դ. մինչև XIV դ. վերջին քառորդը, իսկ համալսարանականը՝ XIV դ. վերջին քառորդից (մոտ 1390 թ.) մինչև 1435 թ.: Տաթևի ուսումնագիտական կենտրոնը հռչակված է եղել դեռևս վարդապետարանական շրջանում, հատկապես՝ XI–XII դդ.: Այդ հռչակը վարդապետարանը վայելել է դասավանդողների ունեցած մեծ հեղինակության և ուսուցանվող գիտությունների խորության ու բազմակողմանիության շնորհիվ: Ուսումնագիտական կենտրոնն ունեցել է համահայկական նշանակություն և հարգ, ինչպես, ըստ արժանավույն, մեծարել է Ստեփանոս Օրբելյանը. « ...արար ցանկալի հռչակաւորաց եւ մեծաւորաց բոլոր Հայաստանն աշխարհիս. եւ ջահաւորեալ իբրեւ զարեգակն ի մէջ աստեղաց՝ երեւելի էր ի մէջ ամենայնի ոչ միայն շինուածովք, այլեւ պայծառանայր քահանայական եւ կրօնաւորական դասուք ի չափ ԵՃ եղբարց. լի էր եւ ծովամատոյց փիլիսոփայիւք եւ երաժշտական երգովք. ճոխ էր եւ վարժարան դպրոցացն վարդապետական կրթութեամբ: Նաեւ արուեստաւորք նկարաչացն եւ գրողաց՝ անհամեմատք... »[3]:

Տաթևի ուսումնագիտական կենտրոնի փառքի ու հեղինակությունը պահպանվեցին մինչև XII դ. կեսերը, երբ կենտրոնի խնամակալությունը ստանձնել էր Սյունյաց մետրոպոլիտ Հովհաննես եպիսկոպոսը, որը վարդապետարանը «զարդարել» էր ոչ միայն սպասքով, աստվածային կարգերով ու կրոնավորներով, այլև անհաղթ փիլիսոփաներով, աննման երաժիշտներով և բանիբուն վարդապետներով ու աստվածազգյաց ճգնավորներով, նաև հոգնապատիկ արհեստավորներով[4]:

Հետագայում Տաթևի վանքը մի քանի անգամ հարձակումների է ենթարկվում,ավերվում ու վերաշինվում: XIII դ. վանքի խնամակալությունը ստանձնում են Լիպարիտ Օրբելյանի որդիներ Սմբատ և Տարսայիճ իշխանները: Սակայն

1 Տե՜ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտ., էջ 916:
2 **Օրբէլեան Ստ.**, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 338:
3 **Օրբէլեան Ստ.**, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 226:
4 Տե՜ս **Խաչերեան Լ. Գ.**, նշվ. աշխ., էջ 359:

շուտով Տաթևի ուսումնագիտական կենտրոնն իր տեղը զիջում է Գլաձորի համալսարանին, որը, կարճ ժամանակ անց, դառնում է համահայաստանյան ամենախոշոր և հեղինակավոր կրթօջախը:

Այսպիսով՝ Սյունիքի նշանավոր ուսումնագիտական կենտրոնները (Շաղատ, Մաքենյաց կամ Մաքենոցաց վանք, Տաթև և այլն) և ուսուցչապետները(Ստեփանոս Սյունեցի Առաջին,ՊետրոսՍյունեցի,Մաթուսաղա, Մովսես Քերթող, Ստեփանոս Սյունեցի (Ստեփանոս Քերթող, Երկրորդ),Սողոմոն Մաքենացի) նշանակալի ներդրում են ունեցել V–XII դդ. Հայաստանի հոգևոր-մշակութային կյանքում՝ նպաստելով հայալեզու դպրության, գիտության, մատենագրության, թարգմանական գրականության զարգացմանը և ազգային ինքնության ու ավանդույթների պահպանմանը:

Միջնադարյան Սյունիքի ուսումնագիտական կենտրոններն ու ուսուցչապետների բույլը հայ մանկավարժության պատմության մեջ անուրանալի պատվավոր տեղ ունեն ոչ միայն տարատեսակ գիտակարգերի ներդրման, զարգացման, դասավանդման, այլև մատենագրական երկերի ստեղծման, ընդօրինակման և պատկերազարդման առումով: Սյունիքը տվել է հայկական մշակույթի մեծաթիվ նշանավոր ներկայացուցիչներ, որոնք լուրջ ներդրում են ունեցել միջնադարյան հայկական մշակույթի զարգացման գործում: Բավական է նշել, որ հենց Սյունիքում են ծնունդ առել ու մեծահռչակ դարձել միջնադարյան Հայաստանի կրթամշակութային կյանքի երկու փառահեղ, անգերազանցելի ուսումնագիտական կենտրոնները՝ Գլաձորի և Տաթևի համալսարանները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, Երկեր, հտ. Գ., գիրք Ա., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968:

2. Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944:

3. Ալեքսանյան Վ., Անանիա եպիսկոպոս Սյունեցի (5-րդ դար), «Էջմիածին» ամսագիր, թիվ Գ., 1999:

4. Ակինեան Հ. Ներսէս, Պետրոս եպս. Սիւնեաց, Հանդէս ամսօրեա, 1903, 1904:

5. Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հատոր Ա., Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 1959:

6. Արևշատյան Ա., Եվս մի անգամ Ստեփանոս Սյունեցու անձի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, N 3, 2003:

7. Արևշատյան Ա., Ստեփանոս Սյունեցի. Իրական անձը և վաստակը (Սյունեցի համանուն երկու երաժիշտների գոյության հարցի շուրջ), Հայ արվեստի հարցեր, հտ. 2, Երևան, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հրատ., 2008:

8. Արևշատյան Ա., Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, Երևան, Կոմիտաս հրատ., 2003:

9. Արևշատյան Ա., Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 2013, էջ 22-24:

10. Գալէմքէարեան Գ., Սիւնեաց դպրոցը, «Տաճար» շաբաթաթերթ, 1911, հ. 36:

11. Թահմիզյան Ն., Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարության ավագ օրհնությունները, Էջմիածին ամսգ., N 2, 1973:

12. Լեո, Երկերի ժողովածու, Երկրորդ հատոր, Հայաստան հրատ., Երևան, 1967:

13. Խաչերեան Լ. Գ., Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները.

դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները եւ համալսարանները միջնադարեան Հայաստանում եւ Կիլիկիայում (V–XVI դդ.), հտ Ա., Լիզպոն, 1998:
14. Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:
15. Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 11, Ե., 1985:
16. Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1983:
17. Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (IX–XV դդ.), Երևան, 1958:
18. Նավոյան Մ. Բյուզանդական ազդեցության վարկածը հայ հիմներգության կարգ (կանոն) ժանրի առնչությամբ - Մանրուսում միջազգային երաժշտագիտաական տարեգիրք, հտ. 2, Երևան, Ասողիկ հրատ., 2005:
19. Սարգիսեան Հ. Բարսեղ, Պետրոս Սիւնեցի, Բազմավէպ, 1904:
20. Սարգսյան Լ. Գ., Կարծեցյալ Ստեփանոս Սյունեցի՝ շարականագիր V դարի, - «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, 1993:
21. Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910:
22. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986:
23. Տեր-Մկրտչյան Գ., Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ., աշխատասիրությամբ՝ Պ. Հ. Հակոբյանի, Ս. Էջմիածին, 1998:
24. Քյոսեյան Հ., Հայ եկեղեցական մատենագրություն, http://qdk.am/wp-content/uploads/2015/02/%D5%80%D5%A1%D5%B5-%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A1%D5%BF%D5%A5%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%A2-%D5%94%D5%B5%D5%B8%D5%BD%D5%A5%D5%B5%D5%A1%D5%B6.pdf
25. Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, http://www.armenianreligion.am/am/Encyclopedia_of_armenian_religion
26. Օրմանյան Մ., Ազգապատում, հտ. Ա., գիրք Ա., Բեյրութ, 1959, էջ 1669:

ЗНАЧИТЕЛЬНЫЕ НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЕ ЦЕНТРЫ И ВЫДАЮЩИЕСЯ ПРОФЕССОРЫ СЮНИКА - АРМАН МАЛОЯН - Своими неприступными крепостями, большим количеством вооруженных сил и военной мощью Сюник имел огромное значение для защиты территориальной целостности и обеспечения незыблемости границ Царства Великой Армении. Горныйкрай одновременно внес большой вклад и в духовно-культурную жизнь Армении, способствовала развитию армяноязычного обучения, науки, переводческой литературы и сохранению национальной самобытности и традиций.

В истории армянской педагогики научно-образовательные центры и плеяда блестящих профессоров занимают почетное место не только благодаря внедрению, развитию различных научных дисциплин, но и созданием литературных и летописных повествований и интерпретаций. Сюник дал значительных представителей армянской культуры, внесших серьезный вклад в развитие средневековой армянской культуры. Достаточно отметить, что именно в Сюнике были основаны знаменитые научно-образовательные непревзойденные культурно-просветительские центры: Гладзорский и Татевский университеты.

В статье представлены научно-образовательные центры Сюника (Шахат, Макенскиймонастырь, Татев и т.д.), имеющие большое значение. Освещены различные

вопросы, связанные с научно-образовательными центрами и профессорами. Оценены роль и место научно-образовательных центровСюника, значение научно-педагогического наследия педагогов Сюникав армянской средневековой культуре.

Ключевые слова: Сюник, V–XII вв., научно-образовательный центр, университет, Шахат, Макенский монастырь (Макеняц или Макеноцац), Татев, профессор, СтефаносСюнеци (Первый), Петрос Сюнеци, Матусала(Мафусала), Мовсес Сюнеци, Стефанос Сюнеци (Второй),Соломон Макенаци.

THE RENOWNED EDUCATION CENTRES AND MASTER EDUCATORS OF SYUNIK (V-XII CENTURIES) - ARMAN MALOYAN - Due to its strongholds, well-built fortresses, the large number of men-at-arms and invincible protection, the province of Syunik was of great significance for the defense of the territorial unity of Greater Armenia. The Highland had also a solid contribution to the cultural and spiritual life of Armenia, in particular to the promotion of education, science, bibliography, literary translation, as well as to the preservation of national identity and national traditions.

The significance of the education centres and the cluster of master teachers of medieval Syunikis indubitable in the history of Armenian pedagogy, for introducing, promoting and teaching various disciplines, as well as for creating, copying, and illustrating literary compositions. Many of the prominent representatives, who have significantly contributed to the development of the culture of medieval Armenia, have been of Syunik origin. Suffice it to say that the two most important majestic education centers, the Gladzor and Tatev universities have belonged to this land.

The paper introduces the celebrated education centres of Syunik (Shaghat, the Makenyats monastery, Tatev etc.) and their master teachers. It tries to answer a number of questions in connection with the activity of the said centers and educators. The role of education centers, the significance of the literary and pedagogical legacy of the educators for the culture of medieval Armenia is appreciated.

Keywords: Syunik, V–XII centuries,education centre, universitը, Shaghat, the Makenyats monastery, Tatev, master teachers, Stephanos the First of Syunik, Petros of Syunik, Methusael, Movsesof Syunik, Stephanos the Second of Syunik, Solomon of Makenis.